# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«02» դեկտեմբերի 2019 թվականի N 276

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ է ներկայացվում 2019 թվականի նոյեմբեր ամսին Հացիկ համայնքի ղեկավարի կողմից արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները: Նշված ժամանակահատվածում ընդունվել է 9 որոշում, արձակվել է 1 կարգադրություն:

Առդիր 13 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

02.12.2019թ.
գ. Հացիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«27» նոյեմբերի 2019 թվականի թիվ 9

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝

### ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հյաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքները շահագործման ընդունելու համար ձևավորել ընդունող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Արթուր Եղիազարյան

Գ.Հացիկ
27.11.2019թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Արմավիրի մարզի
Հացիկ համայնքի ղեկավարի
2019թվականի նոյեմբերի 27-ի
Թիվ 9 կարգադրության

## ԿԱԶՄ
## Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքները շահագործման ընդունող հանձնաժողովի

Հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Եղիազարյան /Հացիկ համայնքի ղեկավար/

Հանձնաժողովի անդամներ՝ Գագիկ Գևորգյան / ՀՀ ՔՏՀԱՏՄ Արմավիրի տարածքային բաժնի քաղաքաշինական գործունեության վերահսկողության գլխավոր մասնագետ/

Ռաֆիկ Երվանդյան / ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ/

Արամ Հայրապետյան / կապալառու ''Լիլիթ-92'' ՍՊԸ տնօրեն/

Արամ Աբգարյան /հեղինակային հսկողություն իրականացնող ''ՕԳԱ ՆԱԽԱԳԻԾ'' ՍՊԸ տնօրեն/

Մինաս Գրիգորյան /տեխհսկողություն իրականացնող ''ՄԳ ՊՐՈՄԻԼ'' ՍՊԸ տնօրեն/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«29» նոյեմբերի 2019 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 79

## ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 04.12.2003 թ-ի N1580-Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ համայնքի մանկապարտեզին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվարկված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում և չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտի իրավունք

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի Հացիկ համայնքում գտնվող 0.34 հա և փաստացի ավել օգտագործվող 0.0071 հա հողատարածքը՝ ընդամենը 0.3471հա, հատկացնել մանկապարտեզին օգտագործման և սպասարկման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գ. Հացիկ 29.11.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«26» նոյեմբերի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 78

## ԱՐԱՄ ՀՐԱՆՏԻ ՄԱՂԱՔՅԱՆԻՆ, ԿԱՐԻՆԵ ԺՈՐԱՅԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՍԻՐԱՐՓԻ ԱՐԱՄԻ ՄԱՂԱՔՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ինքնակամ կառուցված շենք, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ Արամ Մաղաքյանին, Կարինե Պողոսյանին և Սիրարփի Մաղաքյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում և չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտի իրավունք և քանի որ հողամասը նրա կողմից օգտագործվել է մինչև 2019 թվականը և հիմք ընդունելով Արամ Մաղաքյանի դիմումը

### Որոշում եմ

1. Արամ Մաղաքյանի (ծնված 24.07.1963թ.), Կարինե Պողոսյանի (ծնված 29.05.1968թ.), և Սիրարփի Մաղաքյանի (ծնված 21.05.1990թ.) սեփականության իրավունքով պատկանող 0.27 հա մակերեսով (04-058-0268-0002 կադաստրային ծածկագրով) հողամասին կից փաստացի ավել օգտագործվող 0.0441 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը հատկացնել անհատույց սեփականության իրավունքով, որը չի գերազանցում գրանցված հողամասի 20%-ը,:
2. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. մարզերի միավորված ստորաբաժանմանը կատարել վերը նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

գ. Հացիկ 26.11.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«21» նոյեմբերի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 77
# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2009թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետով

1. Հիմք ընդունելով 29.10.2004 թ-ի Ա. Մարտիրոսյանին տրված 04-058-224-001 ծածկագրով 1.78 հա մակերեսով պտղատու այգու հիմնման ակտը որոշում եմ 04-058-224-001 ծածկագրով 1.78 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել պտղատու այգու՝ գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

գ. Հացիկ 21.11.2019թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«13» նոյեմբերի 2019 թվականի

### ՈՐՈՇՈՒՄ N 76

### ԶԱՎԵՆ ՔԱՄԱԼՅԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ինքնակամ կառուցված շենք, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ Զավեն Քամալյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվարկված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում և չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտի իրավունք և քանի որ հողամասը նրա կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 5-ը և հիմք ընդունելով Զավեն Քամալյանի դիմումը

Որոշում եմ

1. Ճանաչել Զավեն Քամալյանի (ծնված 25.11.1969թ.) սեփականության իրավունքը 0.3287 հա մակերեսով (04-058-160-022 կադաստրային ծածկագրով) հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.06574 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ, որը չի գերազանցում գրանցված հողամասի 20%-ը:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքում համայնքային սեփականություն հանդիսացող Զավեն Քամալյանի հողամասին կից 0.39156 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի կարգով վաճառել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Զավեն Քամալյանին, քանի որ նա 2000 թվականից սկսած օգտագործել և բարեխղճորեն վճարել է իր հողամասից ավել 0.3916 հա հողամասի հարկերը:
3. Վաճառվող հողամասի արժեքն է՝ (3916x222)x30%=260805 ՀՀ դրամ
   ա) 0.3916 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի համար 260805.0 ՀՀ դրամ:

4. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. մարզերի միավորված ստորաբաժանմանը կատարել վերը նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գ. Հացիկ 13.11.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«12» նոյեմբերի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 75

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

Որոշում եմ

1. ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Կարեն Արտավազդի Գրիգորյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքով (ժառանգական գործ համար 722, գրանցված գրանցամատյանում 7251) պատկանող բնակելի տանը` (ծածկագիր 04-058-014-011) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 1-ին փողոց 11 բնակելի տուն
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 12.11.2019թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«11» նոյեմբերի 2019 թվականի

## ՈՐՈՇՈՒՄ N 74

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ – ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱԼԲԻ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ԱՆՅՈՒՏԱ ՄԱՐՏԻՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵՎ ԶԱՐԻԿ ԼԵՎՈՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Սալբի Արամայիսի Վարդանյանը դիմել է Արմավիրի մարզ գյուղ Հացիկ 7-րդ փողոց 5/2 հասցեում գտնվող օրինական տնամերձ հողամասի վրա կառուցված ըստ ժառանգության իրավունքի վկայագրի ձեռք բերված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքների վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով. հիմք ընդունելով Սալբի Վարդանյանի դիմումը

### Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հացիկ գյուղի 7-րդ փողոց 5/2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Սալբի Արամայիսի Վարդանյանի (ծնված 19.03.1967 թվականին), Անյուտա Մարտինի Հակոբյանի (ծնված 10.01.1971 թվականին) և Զարիկ Լևոնի Հակոբյանի (ծնված 14.03.1938 թվականին) իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը համաձայն Արմավիրի մարզի Նոտարական գրասենյակի գրանցված գրանցամատյանում N 5309, ժառանգական գործ N 465 վկայականի հիման վրա, 0.05 հա օրինական տնամերձ հողամասի վրա գտնվող թիվ 1 բնակելի տան՝ 42.4

քառ.մ (կառուցված 1966թ.), բնակելի տան՝ 57.2 քառ.մ (կառուցված 1970թ.), բնակելի տան՝ 4.5 քառ.մ (կառուցված 1980թ.), թիվ 5 պարսպի՝ 2.2 քառ.մ (կառուցված 1980թ.) նկատմամբ:

2. 2008 թվականին կառուցված թիվ 2 ծածկը՝ 2.5 քառ. մ մակերեսով, թիվ 3 անասնաշենքը՝ 13.5 քառ.մ (կառուցված 2008թ.), և թիվ 4 հավաբունը՝ 4.4 քառ. մ. մակերեսով (կառուցված 2008թ.) համարել ինքնակամ:

3. 04-058-008-022 ծածկագրով 0.05 հա հողամասին կից 0.0091հա ավել տարածքը, որը չի գերազանցում տնամերձ հողամասի 20%-ը, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքով հատկացնել անհատույց Սալբի Վարդանյանին, Անյուտա Հակոբյանին և Զարիկ Հակոբյանին:

4. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Սալբի Արամայիսի Վարդանյանի (ծնված 19.03.1967 թվականին), Անյուտա Մարտինի Հակոբյանի (ծնված 10.01.1971 թվականին) և Զարիկ Լևոնի Հակոբյանի (ծնված 14.03.1938 թվականին) իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին և 3-րդ կետում նշված բնակելի տան, շենք- շինությունների ու հողամասի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5. Համայնքի ղեկավարի նախկին 15.10.2019թ-ի թիվ 70 որոշումը համարել անվավեր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ

11.11.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox,ru

«8» նոյեմբերի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 73

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԼԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ինքնակամ կառուցված շենք, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ Ազատ Մարտիրոսյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվարկված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում և չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտի իրավունք և քանի որ հողամասը նրա կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 5-ը և հիմք ընդունելով Հարություն Մարտիրոսյանին դիմումը

Որոշում եմ

1. Ճանաչել Հարություն Կառլենի Մարտիրոսյանի (ծնված 24.09.1967թ.) սեփականության իրավունքը 0.71 հա ընդհանուր մակերեսով (04-058-244-008 կադաստրային ծածկագրով 0.30 հա հողամասի, 04-058-242-028 ծածկագրով 0.29 հա հողամասի և 04-058-002-022 ծածկագրով 0.12 հա տնամերձ հողամաս) հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.0043 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ:
2. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. մարզերի միավորված ստորաբաժանմանը կատարել վերը նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:
3. Համայնքի ղեկավարի նախկին՝ 30.01.2019 թ-ի թիվ 13 որոշումը համարել անվավեր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գ. Հացիկ 16.10.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«06» նոյեմբերի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 72

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

**Որոշում եմ**

1. ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքին պատկանող մանկապարտեզի շենքին՝ (ծածկագիր 04-058-017-008) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 3-րդ փողոց 1 նրբանցք 1:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 06.11.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«06» նոյեմբերի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 71

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

Որոշում եմ

1. Քաղաքացի Գեորգի Էլդինեսի Համբարյանին (մահացած 31.01.2017թ.) պատկանող բնակելի տանը` (ծածկագիր 04-058-018-027) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 5-րդ փողոց 27 շենք 2 բնակելի տուն
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 06.11.2019թ.